

7390

" Bunge's Plate-Insects of Japan

Unpublished Type Specimens. "

891.99

F-45

P-1905

891.542-3

F-45

ԸՅՈՒՆԻ ԲԷԿ-ՑՈՎՍԷՓԵՆՆ

ԵՐԹԱՆՔ ՄԸՐ ՎԱԹԱՆ

(Պատկեր հայ գաղթականների կեանքից)

ԹԻՖԼԻՍ

1905

891.99

F-45

878m

891.99

F-45

Այ.

ԹԱԳՈՒՅԻ ԲԷԿ-ՅՈՎԱԼՔԱՆՆ

ԵՐԹԱՆՔ ՄԸՐ ՎԱԹԱՆ

1001
1277

(Պատկեր հայ զաղթականների կեանքից)

2003



ԹԻՖԼԻՍ

1905

Արագածիսկի Ա. Քուրաբեկյանի, Նիկ. փ. № 21.

1101

1997

Дозволено цензурою, С.-Петербургъ,
11-го Февраля 1905 г.

իւր վաղարատամ ծնողների

ՋԱՐՈՒՀԻ ԵՒ ԳԱՅՐԻՆԷԼ-ՅԷԿ

ՄԻԼԻԶ-ՅԱՀՆԱԶԱՐԵԱՆՆԵՐԻ

անմուսնալի յիշատակին նուիրում է

ԴՈՒՍՏԻԸ

ԿԵՐԹԱՆՔԻ ՄԸՐ ՎԱԹԱՆ...

1902 թ. յուլիս ամսին էր:

Ամբողջ մի ամիս էր, ինչ երկինք
քը մի կաթիլ անձրև անգամ չէր
բարեհաճել ուղարկել զովացնելու
ծարաւից այրուող, պապակուող
դետինը: Անասելի շոքերի պատ-
ճառով, Կարսում առաւօտուայ ժամ
9-ից մինչև երեկոյեան ժամի 7 — 8ը
փողոցներում դուք շատ քիչ մարդ-
կանց կը հանդիպէր, այնքան զօ-
րեղ էին, կիզիչ էին արևի ճառա-
գայթները, որ մարդու ուղեղն ու

ողջ մարմինը մի քանի րոպեում
 թափանցելով՝ այրում, խորովում
 էին... Մերունները պատմում էին
 թէ՛ տաճնեակ տարիների, աւելի
 լաւ է ասեմ՝ իրենց ողջ կեանքում
 չեն յիշում այդպիսի մի ամառ Կար-
 սում, որը կատարեալ պատուհաս
 էր կարսեցիների համար, վասն զի
 Կարսի կլիման խիստ լինելով, շատ
 էլ ամառուայ երես չենք տեսնում,
 գրեթէ տարուայ մէջ ընդամենը
 2—3 ամիս ունինք, որոնց ընթաց-
 քում կարող ենք մեր «բներից»
 դուրս գալ մի փոքր թարմ ոդ
 շնչելու, զովանալու, ուրախանա-
 լու... թէ չէ՛ ինչպէս ասում են՝
 ով է դրսի երես տեսնում,—տա-
 րին տասն երկու ամիս փակուած
 մեր տներում՝ անձնատուր ենք

լինում քաղցր բամբասանքների...
 Է, հապա այդ բոլորի վրայ աւե-
 լացրէք նաև Կարսի սարսափելի
 փոշին, որ մարդու աչքերն է ծա-
 կոտում, հագուստը ոչնչացնում,
 մարդու շնչառութիւնը կտրում,
 պէսպէս ցաւեր առաջացնում, այն
 ժամանակ պատկերը կատարեալ
 կը լինի։ Կարսի աղքատիկ բուսա-
 կանութիւնը մի քանի օրուայ մէջ
 բոլորովին չորացաւ, խանձուեց,
 այրուեց երաշտութիւնից ամբողջ
 շրջակայքը, և ամենուրեք տիրեց
 խորին տխրութիւնը, յուսահատու-
 թիւնը, թռչուններն անդամ բնու-
 թեան այդ սրտաճմլիկ տեսարա-
 նը տեսնելով, իրենք էլ տխրեցին,
 իրենք էլ յուսահատուեցին։

Անշուշտ կը յիշեն իմ ազնիւ ըն-

թերցողները, որ այդ տարուայ
յուլիս ամսին էր Ռուսիայի զանա-
զան տեղերում տարիներից ի վեր
հիւրասիրութիւն գտած, ապաս-
տարան գտած Հայ գաղթական-
ների յետ դառնալը «Աւետեաց
երկիրը»— խեղճճւկ հայրենիքը ...

Կովկասի և Անդրկովկասի զա-
նազան քաղաքներից ու գիւղերից
խումբ—խումբ գալիս էին Կարս՝
այստեղից ճանապարհուելու դէ-
պի իրենց սիրճւն, աննման Հայ-
րենիքը... Գալիս էին ոմանք ու-
տարօրիկ, առանց չարուխի իսկ
ոտքերին, և՛ որ ամենագլխաւորն
է, չատերը ոտքով—եաեան... իսկ
փոքր ի չատէ ունեւորները, որոնք
տարիների ընթացքում հաց մու-
րալով, սրահերա մօտ ծառայելով,

ջուր կրելով, համալութիւն անե-
լով մի քանի ռուբլի էին յետ դը-
ցել «սե օրուայ» համար, իրենց
ընտանիքը, քիւլֆաթը ֆուրգօնով
էին բերում Կարս: Փոյթ չէր սա-
կայն այդ թշուառացած մարդ-
կանց համար, թէ այդ անտանելի
ամսին ո՛չ միայն չի կարելի ճա-
նապարհորդել, այլ նոյն իսկ տնից
դուրս գնալ. նրանք ուխտել էին
ինչ որ էլ լինի, այդ խոջնդոտի
առջևն էլ երկար կանգ չառնել,
միայն թէ հասնէին իրենց միակ
իղձին... միայն թէ իրենք ողջ-
առողջ հասնին իրենց երկիրը,
Հայրենիքը, որից դուրս—փորձը
ցոյց տուեց նրանց որ—չիք մխի-
թարութիւն, չիք երջանկութիւն,
չիք բարօրութիւն...: Ռուս բրնձ,

պրաչայ», հանդիպող Ռուսին մընաս բարե էր անում մեր Մշեցին, Կարնեցին, Վանեցին... «մայամ—տվայամ» սովորած ուսերէնով...

Մարդու սիրալ կսկծում էր, մխկոտում էր տեսնելով մերկ, բոկոտն, համարեան շատերին ցնցոտիներէ մէջ փաթաթուած մանկանց, երեխաներին, դեռ չենք խօսում մեծերի մասին, որոնք, ի հարկէ, ամեն ջանք ու ճիգ թափում էին անվտանգ իրենց քիւլֆաթը տեղ հասցնելու... Բայց և այնպէս մարդ ակամայ զարմանում էր, երբ տեսնում էր այդ ողբալի վիճակի մէջ եւս նրանց շրթունքներին ժպիտ, աչքերին ուրախութիւն, գոհութիւն, ուրախ քրքիջներ և այլն և այլն։ Աս-

տում իմ,— մտածում էի ես,— միթէ չքաւորութիւնն ու ուրախութիւնը, հարստահարութիւնն ու ինքնագոհութիւնը կարող են երբ և իցէ իրար հետ հաշտուել,— ո՞վ զարմանք, աչքերս չէն խաբում արդեօք ինձ, ինչո՞ւ միայն այսօր է այսպէս, իսկ մնացած ժամանակները բոլորովին ուրիշ տեսակ. մի ուրիշ ժամանակ ես անբնական կը համարէի այդ տմենը, իսկ այսօր բնական եմ համարում անբնականը... Ինչն է պատճառը արդեօք.— այն, յարգելի ընթերցող, որ մի մեծ Մէր, մի մեծ Բան այնքան էր գրաւել, յափշտակել, տիրել այդ թշուառացած հայերի սրտերը, որ նրանք պահ մի մոռացութեան տա-

լով իրենց առօրեայ տանձանքները, պակասութիւնները, ցաւերը, բիւր-բիւր անտանելի դարգերը, ոգևորուած այն աստիճանի, որ կարծում են թէ իրենցից երջանիկ ոչ ոք չը կայ այս աշխարհում, որովհետեւ... որովհետեւ... գնում են իրենց հայրենի տունը, երկիրը... ահա թէ ինչո՞ւ էին նրանք ուրախ, զուարթ, ասում, խօսում, խնդում, և՛ ըստ երևութին անհոգ երևում մեր աչքերին...:

Գաղթականների համար Կարսի ոստիկանութիւնը զիշերելու տեղեր էր պատրաստել խաներում, զանազան մասնաւոր տներում, խրմբերը Կարսի երկաթուղու կայարանում իջնելուն պէս իշխանութեան կարգադրութեամբ բազմա-

թիւ զինուորներ ու ոստիկաններ շրջապատում էին նրանց և ուղեկցում մինչև նշանակուած խանը կամ տունը: Այստեղ միջանկեալ թող ներուի ինձ ասել, որ այն տներում կամ խաներում, ուր մընում էին գաղթականները, դրսից պաշտպանւում էին զինուորներով կամ ոստիկաններով, մինչև որ այդ բաղադրութիւնների դրութիւնը, վիճակը որոշէր ողորմած կառավարութիւնը: Հրամայուած էր, ոչ ոքի չթողնել այդ հայրենագուրկ մարդկանց հետ անսնուելու, խօսելու ցկարգադրութիւն... Ի հարկէ, բացառութիւն կարող էին կազմել արտօնութիւն ունեցող, գիրք ունեցող անհատները: Մեր տունը, աւելի լաւ է ասեմ կա-

ցարանը գտնուում էր միջնաբերդի տակը, որի մօտ, երկու քայլի վերայ կայ մի հին տաճկական մզկիթ։ Այդ մզկիթը տարին մի երկու անգամ է լոյսի երես տեսնում, դուռը բացւում, այն էլ այն ժամանակ, երբ նոր զօրք է գալիս, գիշերում է այդ տեղ, մնացած ժամանակը միշտ փակ է լինում։


Մի գիշեր բերել լեցրել էին մզկիթը ոչխարների հօտի պէս մօտ 400 հոգի գաղթականներ։ Մենք անճշ քնած ենք եղել, ոչինչ չենք իմացել թէ մեր հայաթին կից մի աղօթատան մէջ ապաստան են գտել մի քանի հարիւր հայեր, որոնք վերագառնում են իրենց հայրենիքը։ Աղօթարա-

նը դեռ չէր բացուել, արագաղը դեռ նոր էր կանչել իւր զիւ «ծուզրուղուն» աւետել ուղիարհին, որ մօտենում է լուսանալու ժամանակը, ասում եմ՝ դեռ արշալոյսը չէր բացուել, որ փոքրիկ տղաս կանչեց իւր սովորական «ծուզրուղուն» — մայրիկ, կաթ կուղեմ... Զարթայ տեսնեմ ինչ—մեր հայաթի կողմից, ճիշտ մզկիթի պատերի միջից երգերի ձայներ են գալիս։ Պահ մի կարծեցի թէ գտնուում եմ քաղցր երազի մէջ. սակայն մի փոքր երեխաս հանգստացնելուց յետոյ լուսամուտի վարագոյրը յետ քաշեցի տեսնելու դուրսը այդ գիշերուայ խիստ պահուն ինչ ձայներ են, որ հասնում են ալանջիւս—ինչէր կատարւում... Ո՛վ

զարմանք, աչքերիս յանկարծ ներկայացան մի խումբ խղճալի հայ եղբայրներ ու քոյրեր—մեծ ու փոքր երեխաներ—այստեղ այնտեղ թափուած մզկիթի բակում, հայաթում... ամբողջ մարմնովս մի ակնթարթում սարսուռ անցաւ, ինքզինքս կորցրի, երեւակայութեամբ փոխադրուեցի մի օրիշ աշխարհ, Հայաստան աշխարհ... Ախ, էլ չը գիտեմ թէ ինչպէս եմ այդ գիշերը լուսացրել, միայն այն կը յիշեմ, որ ես կանգնած էի առաւօտուայ ժամը 7-ին գաղթականների մօտ: Մզկիթին մօտեւալու վրայ էի, երբ զարմանքով լսեցի այդ Աստուծոյ տանը—ուր բարեպաշտ միւսիւլմանները այլ ես չեմ խնդրում Ալլահից իրենց մար-

1001
1921

դարէ Մահմէդի խոստացեալ արքայութիւնը—մեր Հայաստանեայց Ս. Եկեղեցում երգուող հոգեգմայլ աղօթքներից ու երգերից ամենաքաղցրը «Առաւօտ լուսոյ»... Ո՛րքան քաղցր է, որքան գիւթիչ այդ ըոպէին ինձ համար «Առաւօտ լուսոյ» քաղցրահնչիւն եկեղեցական երգը... մանաւանդ որ երգում էին մեր բազմաչարչար եղբայրներն ու քոյրերը միասին աչրերնին յառած գէպի զթառատ երկինքը... Եւ—վայ ինձ—այդ պահուն նկատեցի շատերի աչքերին արցունքի աղի կաթիլներ, ո՛վ գիտէ, ի՞նչեր էին պատկերացնում իրենց աչքերին մօտիկ անցեալից...»



Ասացի մօտեցայ գաղթականներին, բայց նրանց մօտենալը հեշտ բան չէր, հարկաւոր էր վրատահութիւն, որովհետեւ խստապահանջ և օրէնքը «բառացի» կատարող զինուորները չէին թողնի ինձ մօտենալու, եթէ հանգամանքները ինձ չօգնէին... «մինչև անգամ Աստուծոյ մօտ էլ մարդ է հարկաւոր»:

Սրտածմլիկ տեսարան, որի առջև ապառաժն անգամ կը կակղանայ, կը մեղմանայ, գազանն անգամ ի գութ կը շարժի, սակայն տես, ընթերցող, որ մենք գազանից անգամ ստոր ենք, վասն զի այդ բոլոր թշուառութիւնները մենք ենք ստեղծում մեզ նմաններին համար, — թալանում, յա-

փշտակում ենք ուրիշի ունեցած-չունեցածը, խլում ենք ներառ ձեռքից իւր երեխաների վերջին թիքէն, պատառ, մեր եղբայրները — մարդ արարածները — իրար գազանաբար ոչնչացնում են, կոտորում են, ջրնջում են, յափշտակում ու պղծում են ուրիշի ընտանեկան սրբութիւնը, այդ բոլորը մարդիկ իրար են անում, ինչ է յագենայ իրենց մարդկային — գազանային կրքերը... ի գուր չէր, ընթերցող, մի գիտնական ասել թէ «ամենասոսկալի գազանը մարդ արարածն է»...:

Մօտեցայ իրենց, դանազան ծընողաց զաւակներ, մարդիկ, տղաներ ու աղջիկներ, կանայք, ծե-

րեր ու երիտասարդներ համա-
խմբուած, մի սիրտ և մի հոգի
դառած, մի հայկական մեծ ըն-
տանիք կազմած՝ քիթ բթի են
տուել խորհում են իրենց անելի-
քի մասին, ոմանք տաք տաք վի-
ճում են, դատում են, խօսակ-
ցում են, երգում են զանազան
երգեր, որոնք յիշեցնում են մէ-
կիկ մէկիկ իրենց կրած դառ-
նութիւնները իրենց պաշտելի Հայ-
րենիքում, ոմանք պահ մի մոռա-
ցութեան տալով իրենց առօրեայ
սովորական «ասէ կօսէները», բա-
բասանքները, նկարագրում են ի-
րենց բնակավայրերի կարկաշուն
գետերն ու անուշահամ աղբիւ-
րների ջրերը, սարերն ու ձորերը,
դաշտերն ու մարգագետինները,

իւրաքանչիւր տեղի մեծ, հրաշա-
գործ վանքերն ու ուխտատեղինե-
րը, ծառերն ու ապառաժ քարե-
րը, Բինգեօլի ու Արաքսի անու-
շահամ ձկներն ու թռչունները...
Միով բանիւ այնպիսի նկարագրու-
թիւններով էին զբաղուած մեր
ապաբալդ բոյրերն ու եղբայրնե-
րը, որ, ինչպէս ասում են, «եօթ
օր եօթը գիշեր եթէ մարդ ոչ
ուտէ և ոչ խմէ, միայն լսէ՝ չի
կշտանայ»...»

Տեսայ, որք իւր պատուած
չապիկն էր կարկատում, որք իւր
վաղճւց ցամքած ստիճիկով կերակ-
րում, «կշտացնում» իւր ման-
կանը... որք չորտցած, քար կըտ-
րած սալգաթի (զինուորի) սո-
մին կրծելով իւր քաղցը մի կերպ

կոտորում... որը իւր ոտների վրայ
 դոյացած դարչահոտութիւն տա-
 րածող վերքերն է քոռ դանակով
 բերում, իստըկում... որը մարմնի
 վրայ ծիւ—ծիւ եղած շապիկն է
 հանել՝ անգութ «կենդանիներին»
 անդթօրէն ոչնչացնում, սպանում...
 որը իւր հիւանդ մանկանը մի
 կերպ այդ աղմկալից բախում
 հանգստացնելու, քնացնելու հա-
 մար փալտսի մէջ դրած ուրիշի
 հետ ճօճում օրօրում են, որ սո-
 ված փորով հիւանդ մանուկը
 քնանայ... որը իւր հիւանդ որ-
 դու համար բացօդեայ «անկողին»
 է պատրաստում իւր և իւրային-
 ների հազուատներից... Մի փոքր
 այն կողմը մի մատաղահաս օրի-
 որդ իւր գեղեցիկ աչք ու ուն-

բով քոյրիկին ման է ածում, եր-
 գելով գեղջկական մի վերին առ-
 տիճանի տխուր բրդական երգ,
 որը—թէև խօսքերը չէի հասկա-
 նում—շատ ազդեց առանց այն էլ
 տխուր սրախ վրայ... ոմանք տղա-
 մարդիկ ծխում էին, փատացնում
 էին իրենց չիբուխները, ոմանք՝
 ըստ երևոյթին, նշանակութիւն
 չը տալով այդ սիրտ կտրատող
 տեսարանին, երգում էին երգեր
 ու հրհռում... Արձանացայ կանդ-
 նածս տեղը: Ամեն կերպ զսպում
 էի, սիրտ էի տալիս ինձ, որ ե-
 րեխայի պէս չը լամներանց հետ...
 Ա՛խ, որքան լաւ կըլինէր, որ այդ
 րոպէին միայնակ լինէի սենեակիս
 մէջ... ո՛չ որ չնկատէր, որ լաց եմ
 լինում, ո՞ւմ համար — ո՛չ թէ ինձ

համար, փառք Աստուծոյ, ոչ մի ընտանեկան ցաւ չունեմ—այլ իմ թշուառ քոյրերիս համար, որոնք հալւում, մաշւում, հիւժւում են օտար երկնակամարի տակ, բայց չունին օգնութեան հասնող քոյրեր բազմաթիւ բազդաւոր հայ տիկիններից:

Սաստիկ շօքին այլ ևս ներսը դիմանալ չէին կարող, հետզհետէ դուրս էին գալիս բակը, շարւում մզկիթի չորս բոլորը: Տեսարանը գնալով աւելի և աւելի տխուր էր դառնում, և տեսնողների սրտերը ճմլում, կասեա մեր հայրենիքը իւր բոլոր զարհուրելի տեսարաններով փոխադրուած լինէր այդ տեղ: Միթէ ընդունակ է իմ կանացի թոյլ գրիչը նկարագրելու

այդ պատկերը, խոստովանում եմ, ստուերն անգամ անկարող եմ ներկայացնելու ընթերցողներին: Ինչ և իցէ: Այդ խառնիճաղանճ ամբօխի մէջ նկատեցի մի տիկին, որի արտաքինը մատնում էր, որ ինքը ազգով հայ չէ, այլ... աւելի ուռւ կամ մի ուրիշ ազգութեան պատկանող, բան, ինչպէս ասացի, հայ: Հետաքրքրուեցի և — ո՞վ զարմանք — իմացայ, որ ուռւ է ինքը, որը սիրահարուելով մի գեղեցիկ, կտրիճ հայ տղայի վերայ՝ առել է. իսկ այժմ իւր բերանից մաքուր ծանկահայոց բարբառով ինձ ասաց, որ ինքը դժնում է հայրենիք. իւր խօսքերով «կերթանք մեր երկիր»... Փորձեցի յետ կանգնեցնել իւր մտա-

դրութիւնից, իւր մարդուն չհետեւի. այդ զարմանալի ռուս կիներ այնքան է սիրում իւր ամուսնուն, որ մինչև անգամ պատասխանեց ինձ դժգոհ կերպով թէ՛ «անոր (իւր մարդու) համար պատրաստ եմ կեանքս ալ զոհելու, չէ թէ բաժանուելու անորմէ. անոր հայրենիքն ու իմը մկա մէկ է... կերթանք ըշտէ մըր երկիր... վէ՛վ դիտէ, տեղ պիտ հասնի՞նք թէ ճամբին մըզի պիտ թաշինք բիւրդեր. ես մկա շատ կուզեմ երթալ, քան ասոնք—ցոյց տալով Հայ տիկիկներին ու օրիորդներին—որովհետեւ առջի անգամին է...»

Այդ հանգամանքը ինձ շատ ուրախացրեց, ուստի շտապեցի հանգստացնել այդ տիկնոջը թէ՛ ես

իրեն փորձելու համար վերոյի շեալ խօսքերը ասացի։

—Է՛հ, ինչ ընենք, զիմ բաղժն ալ ադ Հայ քաջ տղան է, կը սիրեմ զինքը, պիտ պաշտեմ անոր հայրենիքն ալ... ծնողներս ու շատերը կը խրատէին ինձի, ամմա անոնց խօսքերուն հէջ նշանակութիւն չը տուի...»


Արդէն կէս օր էր. ֆուրգօնները մզկիթի մօտը պատրաստ էին. սոփած, ծարաւ, հիւսնդ դաղթականները — զեռ կարգին չը հանգստացած—պիտի ճանապարհուէին դէպի Ռուսթիւրըական սահմանազլուխը. 5—6 գուլէ և աւելի օրուայ ճամբայ ունէին դեռ ևս մինչև իրենց երկրի հողի վրայ ոտք դնեն... Սկսուեց մի անպատ-


մելի լաց ու կոծ, ճիչ, աղաղակ, վայնասուն մանրիկ երեխաների մէջ:

Քաղցից ու ծարաւից շատերը տեղներից չէին կարողանում շարժուել, իսկ իշխանութիւնը այդ մասին իսկի չէր էլ մտածել... մի երեխայի անդադար «ջուր կուզեմ, աբլա ջան»ը լսելով, մանչուկս տեսնեմ գէպի տուն է վազում, երևի ջուր բերելու: Եւ արդարեւ մի բանի ըսպէսով բերեց մի բաժակ սառը ջուր աղայի համար: Երեխան խմեց ու գրկեց աղայիս, սիրեց: Մատաղահաս մայրը հարցրեց ողբուս անունը, և երբ իմացաւ որ Բաբկէն է, անչափ օրհնեց աւելացնելով որ իւր ողբուս անունն էլ Բաբկէն է,

որովհետեւ «քահանայի թու է»...: Տղաս ինձ բարի օրինակ տուեց. ամեն բարիք թափեցի այնտեղ, կերան, խմեցին, կուշտ-կուշտ օրհնեցին ամբողջ ընտանիքս, տոհմս... բերին քաղաքացիք մերդ, հաց, պանիր, ամեն բան. մի բանիսը խիստ ծեծ կերան ստրաժնիկներից և ոստիկաններից. երբ իմացայ ընդունել տուի, իսկ ծեծող գաղանները մնացին անպատիժ...

Քարաւանը շարժուեց տեղից: Մնաս բարեւ արին շատերը լացաւումաձ. այդ ժամանակ խմբի միջից մի երեխայ արտասանեց «կերթանք մըր վաթան»...





7390

ԳԻՆՆ Է 7 ԿՈՊԵԿ

2013

